ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 16 » 05 2024թ. N Ա/Ո-9

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28

Մասնակից՝ **«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 02656691, գործունեության հասցե՝ ք. Երևան, Քաջազնունի փ. 11/ 23, հեռ. 096 62 89 94/

Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար անխափան սնուցման աղբյուրի գնման նպատակով 19.04.2024թ. հայտարարվել է ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունը: Գնահատող հանձնաժողովի 02.05.2024թ.-ին կայացած նիստում «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայտում արձանագրվել է անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և հնարավորություն է տրվել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հրավերով սահմանված ժամկետում «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունը գնահատող հանձնաժողովին ներկայացրած շտկված փաստաթղթով առաջարկել է «AEC IST7-20» մոդելի անխափան սնուցման սարք, որի հիմնական պարամետրերից մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես. հրավերով սահմանված է մարտկոցների տեսակը և քանակը՝ VRLA առնվազն 40 հատ 12V, իսկ մասնակցի առաջարկած տվյալ մոդելի անխափան սնուցման սարքը՝ 36*9AH/12V պարունակում է 36 հատ մարտկոցներ:

Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (374 10) 52 45 74

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի Հավելված N 1-ի 42-րդ կետով և հրավերի 1-ին մասի 8.11-րդ կետով սահմանված պահանջներով, հայտի գնահատման արդյունքների ամփոփման նիստում որոշել է «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել հայտը ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28 ծածկագրով հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն: Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ըստ այդմ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ մասի իրավակարգավորմամբ և հիմք ընդունելով «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման փաստը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետներում մասնակիցի ներկայացրած շտկված փաստաթղթով առաջարկված անխափան սնուցման սարքի հիմնական պարամետրերից մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, որը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման.

Որոշեցի՝

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը ներառելու համար դիմել լիազորված մարմին՝ համապատասխան գործընթացի կազմակերպման համար:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

5/16/2024

X

ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Signed by: AGHABABYAN AGNESA 8004770010

Ա .ԱՂԱԲԱԲՅԱՆ